



## Աշխատանքի ընդունվելը մասնագիտական որակավորումների մասնակի ճանաչման դեպքում (§ 16d AufenthG) միայն Գերմանիայի համար

### Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես հերթագրվել: Հերթագրվել կարող եք միայն առցանց եղանակով: Առցանց հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքի միջոցով. [www.eriwan.diplo.de](http://www.eriwan.diplo.de) :

- Ոչ գերմանալեզու փաստաթղթերը՝ բացառությամբ անձնագրի տվյալների էջի, պետք է ներկայացնել գերմաներեն հաստատված թարգմանությամբ:
- Վկայականները, դիպլոմները և նմանատիպ փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և ապոստիլով/լեգալիզացիայով: Բնօրինակները կվերադարձվեն:
- Վիզայի համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի ԳԴՀ աշխատանքի դաշնային գործակալության (Bundesagentur für Arbeit) և համապատասխան վայրի Օտարերկրացիների հարցերով մարմնի (Ausländerbehörde) համաձայնությունը: Վիզան կարող է տրվել միայն, երբ դեսպանությունը ստանա այս համաձայնությունները:
- **Դիմումի քննությունը և մշակումը սովորաբար տևում է 6 - 12 շաբաթ**, առանձին դեպքերում՝ ավելի երկար:
- Ավիատոմսի ամրագրում վիզայի համար չի պահանջվում, խնդրում ենք ավիատոմս ամրագրել միայն վիզա ստանալուց հետո:
- Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար:
- Ոչ լիարժեք փաստաթղթերը ձգձգում են դիմումի ընթացքը և կարող են մերժման պատճառ դառնալ:
- **Խնդրում ենք դիմումի մշակման ժամանակահատվածում՝ 12 շաբաթ, ձեռնպահ մնալ դիմումի ընթացքի վերաբերյալ հարցումներ անելուց:** Այդ հարցումները էապես ծանրաբեռնում են վիզայի բաժնի աշխատանքը, այդ պատճառով վիզայի բաժինը չի կարող պատասխանել:
- Վիզայի վճարը կազմում է 75 եվրո, որը վճարվում է դրամով՝ դիմումը հանձնելիս:

### Դիմումի փաստաթղթերը

Դիմում հանձնելիս անհրաժեշտ է **անձամբ** ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը: Մկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել **բնօրինակով**, յուրաքանչյուրից նաև՝ **երկուական պատճեն**: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ փաստաթղթերը պատուհանի մոտ պետք է հանձնել **երկու նույնական փաթեթով** (յուրաքանչյուր փաթեթը սկսվում է դիմում-հարցաթերթիկով և պարունակում ստորև թվարկված փաստաթղթերի պատճենները)՝ դասավորելով նշված հերթականությամբ: Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) անհրաժեշտ է ներկայացնել **A4 ֆորմատի** թղթի վրա: Խնդրում ենք թղթերը **չկարել, չամրացնել**:

Դեսպանությունն ուղարկված այն ֆաքսերը կամ գրությունները, որոնց վրա բացակայում է վիզայի գործի համարը, չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին:

Ոչ լիարժեք դիմումները չեն ընդունվում:

Դեսպանությունը հուշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82–ի՝ յուրաքանչյուր դիմող պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, եթե որևէ փաստաթուղթ բացակայում է, դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

### **Ընդհանուր տեղեկություններ**

Եթե Ձեր մասնագիտական կրթության վկայականը լիարժեք չի ճանաչվել գերմանական իրավասու մարմնի կողմից, Դուք կարող եք դիմել վիզայի համար, որպեսզի Գերմանիայում հասնեք Ձեզնից պահանջվող անհրաժեշտ որակավորումներին՝ միաժամանակ սկսելով աշխատել:

Վերապատրաստումից և Ձեր կրթության լիարժեք ճանաչումից հետո Դուք կարող եք արդեն Գերմանիայում դիմել երկարաժամկետ կացության թույլտվության համար: Խնդրում ենք հաշվի առնել, որ արտերկրում կան համալսարանական ավարտական որակավորումներ, որոնք Գերմանիայում համարվում են միջին մասնագիտական որակավորում:

Գերմանիայում ապրելու և աշխատելու վերաբերյալ տեղեկություններ կարող եք գտնել այստեղ. [www.make-it-in-germany.com](http://www.make-it-in-germany.com)

### **Անհրաժեշտ փաստաթղթեր**

- գերմաներենով կամ անգլերենով լիարժեք լրացված 2 դիմում-հարցաթերթիկ՝ ներառյալ Կացության մասին դաշնային օրենքի §54-ով սահմանված իրազեկումը: Հարցաթերթիկը կարող եք գտնել դեսպանության կայքում՝ սույն հղումով. <https://videx-national.diplo.de>,
- անհրաժեշտության դեպքում՝ երկու լիարժեք լրացված և ստորագրված հայտարարություն հասանելիության ([հղում](#)) վերաբերյալ,
- 3 նոր, բիոմետրիկ լուսանկար, երկուսը խնդրում ենք սուսնձել դիմում-հարցաթերթիկներին,
- գործող ճամփորդական անձնագիր, որը վավերական լինի առնվազն 6 ամիս, (անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ անձնագիրը տրված լինի ոչ ավելի վաղ, քան տասը տարի առաջ),
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, վիզա կամ որևէ այլ նշում,
- Գերմաներենով ինքնուրույն շարադրած և ստորագրած հիմնավորագիր (և մեկ պատճեն), որում մանրամասն ներկայացված լինեն որակավորմանն ուղղված քայլերը և հետագա մասնագիտական կարիերայի պլանները: Գրության մեջ խնդրում ենք նշել նաև, թե որտեղ և ինչպես եք ձեռք բերել մասնագիտական կրթությունը ստանալու համար անհրաժեշտ լեզվական գիտելիքները, և թե անհրաժեշտության դեպքում ինչպես եք պատրաստվում խորացնել դրանք: Եթե դեռևս ձեռք չեք բերել մասնագիտական կրթության համար պահանջվող լեզվական գիտելիքներ, խնդրում ենք հիմնավորել՝ ինչու:
- Գործատուի կողմից լրացված և ստորագրված սույն ձևաթուղթը՝ **„Erklärung zum Beschäftigungsverhältnis“** և **Zusatzblatt A** –ը՝ բնօրինակով և երկու պատճեններով
- Ճանաչման իրավասու գերմանական մարմնի տեղեկանքը՝ Ձեր մասնագիտական որակավորման հաստատման համար անհրաժեշտ համապատասխանեցումների վերաբերյալ կամ մասնագիտական գործունեություն ծավալելու մասին թույլտվությունը՝ բնօրինակով և երկու պատճեններով: Ճանաչման գործընթացի վերաբերյալ մանրամասները՝ սույն հղումով. [www.anerkennung-in-deutschland.de](http://www.anerkennung-in-deutschland.de)

- Եթե Defizitbescheid գրության մեջ նախատեսված են անհրաժեշտ լրացումներ, ապա պետք է ներկայացնել տեղեկանք առ այն, որ գրանցվել էք տեսական դասընթացների, մասնագիտական որակավորմանն ուղղված միջոցառումների (կցել վերապատրաստման պլանը) կամ քննության նախապատրաստական դասընթացների: Ներկայացնել տեղեկանքի բնօրինակը և երկու պատճեն:
- Եթե որակավորման գործընթացը ենթադրում է գերմաներենի դասընթաց, ապա պետք է ներկայացնել լեզվի դպրոցում գրանցվելու հաստատումը, որտեղ նշված լինեն ամրագրված դասընթացի շաբաթական ժամաքանակը (ինտենսիվ դասընթաց՝ առնվազն շաբաթական 18 ժամով) և դասընթացի վճարի հաստատման կտրոնը: Ներկայացնել բնօրինակը՝ երկու պատճենով:
- Որակավորման վկայականներ, օրինակ՝ դիպլոմներ, վկայականներ, և ավարտական վկայական՝ բնօրինակով և երկու պատճենով:
- Գերմաներենի արդեն առկա գիտելիքների վերաբերյալ վկայական՝ բնօրինակով և երկու պատճենով (որպես կանոն՝ նվազագույնը A2, խնամքի և առողջապահական մասնագիտությունների դեպքում՝ B1 մակարդակ):
- Ապացույց բավարար ֆինանսական միջոցների վերաբերյալ

### **Ֆինանսավորում.**

Գերմանիայում կացության համար յուրաքանչյուր դիմումատու պետք է իր տրամադրության տակ ունենա **ամսական նվազագույնը 827 € netto/ 1033 € brutto** գումար: Այս միջոցների առկայության վերաբերյալ ապացույցը պետք է ներկայացվի նախապես՝ դիմումը ներկայացնելիս: Եթե Գերմանիա մուտք գործելուց հետո դեռ աշխատավարձ չէք ստանալու, կամ այն կազմելու է ամսական 827 € netto-ից քիչ, ապա տարբերությունը ամսվա կտրվածքով պետք է ապացուցվի, օրինակ, արգելափակված հաշվի (Sperrkonto) կամ պարտավորագրի միջոցով:

• **Պաշտոնական** պարտավորագիր, որը տրված լինի Գերմանիայում ապրող անձի կողմից՝ համաձայն §§ 66-68 AufenthG-ի, առավելագույնը վեց ամիս առաջ, և որում որպես կացության նպատակ նշված լինի „Maßnahmen zur Anerkennung eine Berufssqualifikation“ (մասնագիտական որակավորման ճանաչմանն ուղղված քայլեր), ինչպես նաև պարտավորվող անձի ֆինանսական հաստատված հիմքերը (Bonität): Այս փաստաթուղթը տրամադրում են Գերմանիայի Օտարերկրացիների հարցերով մարմինները (Ausländerbehörden in Deutschland):

• «Արգելափակված» հաշիվ (Sperrkonto) Գերմանիայի բանկերից մեկում՝ դիմումատուի անունով, որի վրա առկա լինի բացակայող գումարի չափը՝ ճանաչման գործընթացի ողջ տևողության համար:

- Այլ՝ ոչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք, օրինակ՝ Ռուսաստանի, Իրանի կամ Հնդկաստանի քաղաքացիները իրենց բնակությունը Հայաստանում հավաստելու համար պետք է ներկայացնեն Հայաստանի կացության թույլտվություն՝ ռեզիդենտ քարտ (առնվազն վեց ամսվա):
- Բժշկական բավարար ապահովագրական պաշտպանվածության վկայական Եթե օրենքով սահմանված բժշկական ապահովագրության շրջանակում Ձեր ապահովագրական պարտավորությունը պետք է իրացնեք Դուք՝ որպես աշխատող, ապա պետք է նկատի ունենաք, որ այն սկսելու է գործել միայն Ձեր՝ Գերմանիայում բնակության վայրում հաստատվելու և աշխատանքային գործունեությունը սկսելու պահից: Եթե Դուք ավելի շուտ եք մուտք գործելու Գերմանիա, Ձեզ հարկավոր է մինչև աշխատանքային հարաբերության մեկնարկը և օրենքով

սահմանված բժշկական ապահովագրության մեջ Ձեր ներառվելը կնքել ժամանակավոր՝ մասնավոր բժշկական ապահովագրություն: Ճամփորդական բժշկական ապահովագրությունները, հնարավոր է, չապահովեն ապահովագրական պաշտպանվածություն Ձեր ապահովագրության պայմաններում, եթե նախատեսված է երկարաժամկետ և տևական կացություն: Հնարավոր է, որ այսպես կոչված „incoming“ ապահովագրությունները նույնպես չապահովեն այդպիսի պաշտպանվածություն:

### **Կարևոր ցուցումներ**

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ վիզայի դիմումը հանձնելիս որևէ այլ վճար, քան **դեսպանության շենքում՝ վիզաների բաժնի պատուհանի մոտ** գանձվող վիզայի վճարն է, նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** տուրիստական ընկերությունների հետ: **Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, չի համապատասխանում իրականությանը:**

**Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշումները կայացնում է բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում գումար մի՛ տվեք:**

Վիզայի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ **դեսպանության վիզաների բաժնի աշխատակիցներից:** Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն: